

ք. Երևան

« 05 » 03 2021թ.

ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Ն. Մելքումյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա «Պատվիրատու», մի կողմից, և «Կարհագառ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Հ. Կարապետյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ՝ «Կատարող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է տրանսպորտային միջոցների տեխնիկական սպասարկման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

### 2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

### 2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

### 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

#### **4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ**

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 700,000 (յոթ հարյուր հազար ) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxԲ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Բ-ն մատուցված ծառայության քանակն է:

#### **5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ**

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## **6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)**

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## **7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում

սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է [www.procurement.am](http://www.procurement.am) հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ բարձր տեխնոլոգիական  
արդյունաբերության նախարարություն  
Ք. Երևան Վ.Սարգսյան 3/3  
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական  
վարչություն  
Հ/Հ 900011018703  
ՀՎՀՀ 02565518

Գլխավոր քարտուղար  
Ն. Անթրոնյան



### ԿԱՏԱՐՈՂ

«Կարհագառ» ՍՊԸ  
Ք. Երևան, Թբիլիսյան խճ 29/25  
«Արդշինբանկ» ՓԲԸ  
Հ/Հ 2480100076100000  
ՀՎՀՀ 01001431  
Տնօրեն  
Հ. Կարապետյան



**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ\***

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	50111130/6	Տեխնիկական բնութագիրը կցվում է***	դրամ	350,000	1	Ք. Երևան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2021թ.
2	50111130/7	Տեխնիկական բնութագիրը կցվում է***	դրամ	350,000	1	Ք. Երևան	Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո մինչև 20.12.2021թ.

\* ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

**Տեխնիկական բնութագիր \*\*\***

N	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները) ըստ չափաբաժինների <sup>2</sup>	
		Չափաբաժին 1	Չափաբաժին 2
		Տոյոտա Լենդ Կրուիզեր (TOYOTA LAND CRUISER PRADO 2,7 ) 2008թ , VIN համարանիշ՝ JT EBL29J78K002251	Տոյոտա Ավալոն (TOYOTA Avalon 3.5) 2008թ, VIN համարանիշ՝ 4T 1BK36B08U309013
1	2	3	4
	<b>SU-1 ներառվող ծառայությունների անվանում</b>		
1	Բռնկման համակարգի ստուգում	1400	1400
2	Կցորդման համակարգի ստուգում	1400	1400
3	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	1400	1400
4	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	1400	1400
5	ABS համակարգի ստուգում	1400	1400
6	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	1400	1400

7	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1400	1400
	<b>Շարժիչ</b>		
8	Շարժիչի հանում և տեղադրում	19600	19600
9	Շարժիչի վերանորոգում	70000	70000
10	Շարժիչի քանդում արատավորում և հավաքում	16800	16800
11	Շարժիչի գլխիկի հանում տեղադրում միջադիրի փոխարինումով	22400	22400
12	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	16800	16800
13	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով	3360	3360
14	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	840	840
15	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	2800	2800
16	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	11200	11200
17	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	11200	11200
18	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաթևի ներդրակների փոխարինում	22400	22400
19	Ծնկածև լիսեռի հղկում	16800	16800
20	Ծնկածև լիսեռի փոխարինում	14000	14000
21	Ծնկածև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	5600	5600
22	Ծնկածև լիսեռի ատամնանիվի փոխարինում	4200	4200
23	Ծնկածև լիսեռի ուղղում	14000	14000
24	Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	4200	4200
25	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	19600	19600
26	Շարժիչի բլոկի փոխարինում	50400	50400
27	Շարժիչի գլանի փոխարինում 1 հատ	11200	11200
28	Շարժիչի բլոկի հղկում	19600	19600
29	Մխոցի փոխարինում 1 հատ	25200	25200
30	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	70000	70000
31	Բաշխիչ լիսեռի ականոցների հանում և տեղադրում կամ փոխարինում	8400	8400
32	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	4200	4200
33	Փոկանիվի փոխարինում	4200	4200
34	Շարժիչի առամնավոր փոկի փոխարինում	0	0
35	Շարժիչի շղթայի փոխարինում	16800	16800
36	Յուղի մոլիչի շղթայի փոխարինում	5600	5600
37	Շարժիչի վանոսների փոխարինում	22400	22400

38	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	4200	4200
39	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	4200	4200
40	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	4200	4200
41	Շարժիչի քարտերի հանում, տեղադրում մաքրումով	4200	4200
42	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	7000	7000
43	Շարժիչի յուղի մղիչի մաքրում	1400	1400
44	Շարժիչի յուղի մղիչի կարգավորում	1400	1400
45	Յուղի մղիչի թաթիկի փոխարինում	1400	1400
46	Յուղի ծորակի փոխարինում	2800	2800
47	Օդաքաշակ փողոցակի փոխարինում	1400	1400
48	Շարժիչի վառելիքի բարձր ճնշման մղիչի փոխարինում	8400	8400
49	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5600	5600
50	Բ/լիստեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	33600	33600
51	Ուղղորդիչ վռանների փոխարինում	1400	1400
52	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	9800	9800
53	Շարժիչի կափույրի փոխարինում	5600	5600
54	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	5600	5600
55	Մխոցամատի փոխարինում	1400	1400
56	Շարժիչի շարժաթևի փոխարինում	7000	7000
57	Մխոցային օղակների փոխարինում 1 կ-տ	22400	22400
58	Շարժիչի բաշխիչ լիստեռի երիթակի փոխարինում	1400	1400
59	Ատամնանիվի փոխարինում	2800	2800
60	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	4200	4200
61	Սովառիկ փոխարինում	2800	2800
62	Շարժիչի կալունի փոխարինում	2800	2800
63	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	7000	7000
64	Շարժիչի փոկի հողովակի փոխարինում	5600	5600
65	Շարժիչի հողովակի առանցքակալի փոխարինում	4200	4200
66	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	14000	14000

67	Շարժիչի յուղի արանքաչափիչի (Զցտ) իրանի փոխարինում	5600	5600
68	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	7000	7000
69	Շարժիչի գամասեղի փոխարինում	980	980
70	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	5320	5320
71	Գլխիկի հեղույսի փոխարինում	2240	2240
72	Ծնկածև լիսեռի հեղույսի փոխարինում	2240	2240
73	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	11200	11200
74	Շարժիչի վառելիքի սևման համակարգի հանում տեղադրում	11200	11200
<b>3. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ</b>			
75	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	2800	2800
76	Ավտոմեքենայի յուղում	560	560
77	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	2520	2520
78	Յուղի ռադիատորի փոխարինում	5600	5600
79	Յուղի ռադիատորի նորոգում	5600	5600
80	Յուղի գտիչի փակակի փոխարինում	1400	1400
81	Արտածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	11200	11200
82	Ներածման կալեկտորի հանում և տեղադրում կամ փոխարինում	11200	11200
83	Արտածման կալեկտորի միջադիրի փոխարինում	11200	11200
84	Ներածման կալեկտորի միջադիրի փոխարինում	11200	11200
85	Վառելիքի փողրակի փոխարինում	2240	2240
86	Վառոցքի մոմի փոխարինում	1400	1400
87	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	4200	4200
88	Օդի գտիչի փոխարինում	840	840
89	Կոնդիցիոների գտիչի փոխարինում	840	840
90	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	2800	2800
91	Օդի ծախսաչափիչի փողրակի հանում և տեղադրում	1400	1400
92	Օդի գտիչի փողրակի հանում և տեղադրում	1400	1400
93	Օդաքաշի փողրակի հանում և տեղադրում	1400	1400
94	Ավտոմատ փոխանցման տուևի ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	19600	19600

95	Ինժեկտորի բոցամուղի փոխարինում	2800	2800
96	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	4200	4200
97	Բոցամուղի կողավորում	5600	5600
98	Ինժեկտորի բոցամուղի խտաբուկերի փոխարինում	3360	3360
99	Բենզամուղիչի փոխարինում	4200	4200
100	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	1680	1680
101	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1400	1400
102	Բռնկման կարգավորում	1400	1400
103	CO կարգավորում	1400	1400
104	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5600	5600
105	Ղեկավարման բլոկի վերանորոգում	11200	11200
106	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	4200	4200
107	Վառելիքի բաքի մաքրում	2520	2520
108	Արագարարի ոտնակի փոխարինում	1400	1400
109	Արագարարի ոտնակի տվիչի փոխարինում	1400	1400
110	Օդի ծախսի տվիչի փոխարինում	2800	2800
111	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	4200	4200
112	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	1400	1400
113	Բենզոբաքի բենզոմուղիչի ցանցի փոխարինում	1400	1400
114	Բենզոբաքի բենզոմուղիչի ցանցի մաքրում	1400	1400
115	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	3360	3360
116	Տվիչի փոխարինում	1400	1400
<b>4. Սառեցման և արտաձման համակարգ</b>			
117	Հովիարի փոխարինում	5600	5600
118	Հովիարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3360	3360
119	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	5600	5600
120	Ռադիատորի շրջանակի փոխարինում	4200	4200
121	Շերտափեղկի փոխարինում	4200	4200
122	Շերտափեղկի կառավարման ձգածողի փոխարինում	4200	4200
123	Ռադիատորի կալունակի փոխարինում	1400	1400
124	Ռադիատորի փողրակի փոխարինում	1400	1400

125	Կոնդիցիոների կոմպրեսորի հանում և տեղադրում կամ փոխարինում	7000	7000
126	Կոնդիցիոների կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1400	1400
127	Կոնդիցիոների առանցքակալի փոխարինում	2800	2800
128	Կոնդիցիոների ռադիատորի փոխարինում	5600	5600
129	Կոնդիցիոների ռադիատորի նորոգում	12600	12600
130	Կոնդիցիոների կոմպրեսորի նորոգում	5600	5600
131	Ընդարձակող բաքի փոխարինում	2800	2800
132	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	1400	1400
133	Ջրի ծորակի փոխարինում	840	840
134	Հովացման հիդրոկցորդի փոխարինում	2800	2800
135	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	840	840
136	Հովհարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	4200	4200
137	Հովհարի թևանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	2800	2800
138	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	18200	18200
139	Վառարանի ռադիատորի նորոգում	2800	2800
140	Վառարանի շարժիչի փոխարինում	5600	5600
141	Թերմոստատի փոխարինում	4760	4760
142	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	5600	5600
143	Գեներատորի փոկի փոխարինում	3920	3920
144	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	3360	3360
145	Ջրի ռադիատորի վերանորոգում	15400	15400
146	Սառեցման համակարգի օդահանում	1400	1400
147	Խլարարի գոֆրայի փոխարինում	4200	4200
148	Կատալիզատորի հանում	7000	7000
149	Խլարարի կատալիզատորի տվիչի փոխարինում	2800	2800
150	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	2800	2800
151	Խլարարի 1 հատ խողովակի փոխարինում	2800	2800
152	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	560	560
153	Խլարարի ներդիրի փոխարինում	2800	2800

154	Խլարարի կախոցի փոխարինում	2800	2800
155	Կալունակի փոխարինում	14000	14000
156	Ռեզոնատորի փոխարինում	7000	7000
157	Հովացման հեղուկի փոխարինում	840	840
<b>5. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ</b>			
158	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	11200	11200
159	Աշխատանքային կամ գլխ. գլանի հիմնական նորոգում ներառյալ աշխատանքները	8400	8400
160	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	16800	16800
161	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	2800	2800
162	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	2800	2800
163	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	1400	1400
164	Կցորդման երկժանիի փոխարինում	1400	1400
165	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	84000	84000
166	ՓՏ-ի հավաքածույի փոխարինում	11200	11200
167	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	5600	5600
168	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	11200	11200
169	ՓՏ-ի համաժամիչի փոխարինում	9240	9240
170	ՓՏ-ի և ԱՓՏ-ի հանում և տեղադրում	16800	16800
171	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	8400	8400
172	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում կամ փոխարինում	8400	8400
173	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	8400	8400
174	ՓՏ-ի միջանկյալ լիսեռի փոխարինում	8400	8400
175	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	8400	8400
176	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	11200	11200
177	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	11200	11200
178	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	14000	14000
179	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի վերանորոգում	7000	7000
180	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	4200	4200
181	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	4200	4200
182	ՓՏ-ի յուղի փոխարինում	840	840
183	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	2800	2800

184	ԱՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	168000	168000
185	ԱՓՏ-ի հավաքածույի փոխարինում	0	0
186	ԱՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	11200	11200
187	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում կամ փոխարինում	11200	11200
188	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	11200	11200
189	ԱՓՏ-ի կցորդման գլխավոր գլանի կալունակի փոխարինում	11200	11200
190	ԱՓՏ-ի սուլենոիդների փոխարինում	11200	11200
191	ԱՓՏ-ի համակարգչի և սուլենոիդների փոխարինում	33600	33600
192	ԱՓՏ-ի յուղի մղիչի փոխարինում	14000	14000
193	ԱՓՏ-ի յուղի մղիչի խտաբուկների փոխարինում	4200	4200
194	ԱՓՏ-ի ռադիատորի նորոգում	2800	2800
195	ԱՓՏ-ի ռադիատորի փոխարինում	7000	7000
196	ԱՓՏ-ի հիդրոագույցի փոխարինում	8400	8400
197	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	5600	5600
198	ԱՓՏ-ի յուղի փոխարինում	2800	2800
199	ԱՓՏ-ի զտիչի լվացում, մաքրում քարտերի հանում և տեղադրումով	2800	2800
	<b>6. Կախոց</b>		
201	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0
202	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում կամ փոխարինում	16800	16800
203	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	8400	8400
204	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5600	5600
205	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5600	5600
206	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5600	5600
207	Անվակունդի գամասեղի և հեղուկի փոխարինում(մեկ անիվի համար)	5600	5600
208	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկների փոխարինում	1400	1400
209	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5600	5600
210	Առջևի զսպանակի փոխարինում	3360	3360
211	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	1680	1680

212	Ներքևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	3920	3920
213	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	4200	4200
214	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	2800	2800
215	Անիվների պաշտպանիչի փոխարինում	560	560
216	Շարժիչի պաշտպանիչի փոխարինում	2800	2800
217	Վերևի լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	28000	28000
218	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	4200	4200
219	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	2800	2800
220	Գնդե հողակապի պատյանի փոխարինում	560	560
221	Գնդե հողակապի փոխարինում	1120	1120
222	Գնդե հողակապի նորոգում	4200	4200
223	Առջևի կայունարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	4200	4200
224	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	1400	1400
225	Առջևի կայունարարի կալունակի փոխարինում	2800	2800
226	Առջևի կայունարարի կանգնակի փոխարինում	2800	2800
227	Հետևի կայունարարի վռանների փոխարինում 1 հատ	2240	2240
228	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	1680	1680
229	Հետևի կայունարարի կալունակի փոխարինում	2240	2240
230	Հետևի զսպանակների փոխարինում	2800	2800
231	Հետևի ձգաձողի հանում և տեղադրում կամ փոխարինում	1400	1400
232	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	4200	4200
233	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	4200	4200
234	Հետևի կախոցի սայլենտ-բլոկի սպասարկում	3360	3360
235	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	5600	5600
<b>7. Ղեկային մեխանիզմ</b>			
236	Ղեկասյունակի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	19600	19600
237	Ղեկասյունակի արորիկի փոխարինում	4200	4200
238	Ղեկասյունակի առանցքային սռնու փոխարինում	7000	7000

239	Ղեկապետական խաչուկի փոխարինում	8400	8400
240	Ղեկապետական վերանորոգման հավաքածույի փոխարինում	7000	7000
241	Ղեկապետական քանդում, արատավորում, հավաքում	5600	5600
242	Ղեկապետական կարգավորում	2800	2800
243	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	2800	2800
244	Ղեկային մեխանիզմի ժապավենի փոխարինում	4200	4200
245	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածույի փոխարինում	1400	1400
246	Ղեկային մեխանիզմի փոխակերպիչների հավաքածույի նորոգում	1400	1400
247	Ղեկապետական պատյանի փոխարինում	1400	1400
248	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	2800	2800
249	Ղեկային մեխանիզմի փականքի և հակաառևանգման մեխանիզմի փոխարինում	2800	2800
250	Ղեկային մեխանիզմի ղեկապետական ամրացման անուրի փոխարինում	1400	1400
251	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	5600	5600
252	Ղեկային կալունի ձգանների փոխարինում	4200	4200
253	Ղեկային կալունի միջին ձգանի փոխարինում	2800	2800
254	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում	1400	1400
255	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում կամ փոխարինում	5600	5600
256	Ղեկի էլեկտրական կարգավորիչի փոխարինում	8400	8400
257	Ղեկային ճոճանակի նորոգման լրակազմի փոխարինում	1400	1400
258	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	4200	4200
259	Հիդրոուժեղարարի մոլիչի փոխարինում	8400	8400
260	Հիդրոուժեղարարի մոլիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	11200	11200
261	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	2800	2800
262	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	4200	4200
263	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	4200	4200
264	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածույի փոխարինում	7000	7000

265	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	1400	1400
266	Ղեկային ձողի գնդե հողակապի նորոգում	4200	4200
267	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	4200	4200
268	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	2800	2800
269	Ղեկային ձգածողի ծայրակալների փոխարինում	2800	2800
270	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	1400	1400
<b>8. Արգելակային համակարգ</b>			
271	Վակումային ուժեղարարի փոխարինում	11200	11200
272	Վակումային ուժեղարարի փակակի փոխարինում	1400	1400
273	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	8400	8400
274	Գլխ. գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	11200	11200
275	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	8400	8400
276	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	5600	5600
